ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1299[19]-31.03.2026-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի.

1) 5-րդ մասը «տրամադրվում են» բառերից հետո լրացնել «օրենքով սահմանված դեպքերում կամ» բառերով,
2) 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) երաշխիքը տրամադրվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքով սահմանված՝ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին և «Բանկերի վերակառուցման մասին» օրենքով սահմանված՝ վերակառուցման հիմնադրամին՝ օրենքով սահմանված դեպքերում:»:

Հոդված 2. Օրենքի 11.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11.1. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին և Վերակառուցման հիմնադրամին բյուջետային երաշխիքի տրամադրումը

1. Եթե հատուցման դեպք առաջանալու պահին կարող է վտանգվել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությունը (իրացվելիությունը և/կամ վճարունակությունը), ապա Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տրամադրվել առնվազն երեք տարի ժամկետով բյուջետային երաշխիք՝ առանց ապահովման միջոցի:

2. «Բանկերի վերակառուցման մասին» օրենքի 21-րդ հոդվածով սահմանված դեպքում վերակառուցման հիմնադրամին (այսուհետ՝ Վերակառուցման հիմնադրամ) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տրամադրվել առնվազն երեք տարի ժամկետով բյուջետային երաշխիք՝ առանց ապահովման միջոցի:

3. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին և Վերակառուցման հիմնադրամին տրամադրվող բյուջետային երաշխիքը ստորագրվում է պետական լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշման հիման վրա:

4. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ, 10-րդ մասերի և 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի «բ» կետի կանոնները չեն տարածվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին և Վերակառուցման հիմնադրամին բյուջետային երաշխիք տրամադրելու հարաբերությունների վրա:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 14-րդ մասում «իրականացմանն աջակցելու (այդ թվում՝ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի կառավարման)» բառերը փոխարինել «իրականացմանը (այդ թվում՝ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի կառավարմանը), տնտեսությունում ֆինանսական ծառայությունների անխափան մատուցմանն աջակցելու» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: